

Հ Ա Յ Ո Յ Մ Ա Յ Ի Ե ր

Ե ր Գ

Հայոց մայրեր,
Սիրուն մայրեր,
Չէ՛, ձեզ միայն չէք ծըներ
Ձեր զաւակներ:

* * *

Այն կաթ ու մեղր անուշ տրղայք՝
Առ որ ըզշունչ ծոցոյդ կուտայք,
Այն գայթիգայթ սիրուն տրղայք՝
Որոց վերայ կըզուրգուրայք,
Ու երբ «Մայրիկ» կոչեն ըզձեզ՝
Համբոյր տայք բիւր կարօտակէզ:

Հայոց մայրեր,
Սիրուն մայրեր,
Չէ՛, ձեզ միայն չէք ծըներ
Ձեր զաւակներ:

Այն կրակ ու բոց աշխոյժ որդիք՝
Զբւարձութիւնք ձեր մայրենիք՝
Այն խելացի վե՛հ սատանիք՝
Յոր ըզմայրմամբ խմըն նայիք,
Իրր իտըրախցզ յոյսեր բոլոր,
Պարծանք եւ զարգ ձեր փառաւոր:

Հայոց մայրեր, եւ այլն:

Կոյ ձեզմէ զատ կայ ուրիշ մայր՝
Ձեր ու որդւոցդ ամենամայր,
Որ ձեր փախեր, վիշտն ու ցաւեր,
Ուրախութիւն, փափաք, յոյսեր,
Ու մայրենի զգացմունքդ անչափ՝
Ձեր հետ կըզգայ բոլոր ձեր չափ:

Հայոց մայրեր, եւ այլն:

Որ ձեր տրղոց օրոցքին քով
 Ձեր հետ նըստի յոյս ըզյուսով ,
 Որ առաջին նոցա քայլեր
 Կըհամբէ ձեր հետ սիրտ յերեր ,
 Ի՛երջանկութեան նոցա համար
 Աղօթէ ձեր հետ անդադար :

Հայոց մայրեր ,
 Սիրուն մայրեր ,
 Ձէ , ձեզ միայն չէք ծըներ
 Ձեր զաւակներ :

Այո՛ այգ-քան սիրոյն փոխան
 Սէր պահանջէ եւ ՀԱՅԱՍՏԱՆ ,
 Հայաստան , մայր մեր ամենուն ,
 Հայաստան , կեանք մեր սըրտերուն ,
 Հայաստան , լոյս մեր մութ աչքին ,
 Հայաստան , սէ մեր յոյս վերջին :

Հայոց մայրեր , եւ այլն :

Ո՛հ , ձեր անուշ անուան հետ մէկ
 եւ զՀայրենեաց սովրեցուցէք ,
 Սովրեցուցէք որ զՀայաստան
 Ձեր հետ որդիք ձեր մայր ճանչնան .
 Ձեր հետ ըզնա մէկտեղ սիրեն ,
 Ձեր եւ նորա սէր չըբաժնեն :

Հայոց մայրեր , եւ այլն :

Ա՛հ , գուք կերթայք , սիրուն մայրեր ,
 Իսկ Հայաստան մնայ աներեր ,
 Բայց թէ որդւոց սովրեցուցիք
 Ձեր հետ յիշել ըզՀայրենիք ,
 Հայաստանի անուան հետ մէկ
 Ըզձերդ այլ սէ մոռնան երբէք :

Հայոց մայրեր ,
 Սիրուն մայրեր ,
 Ձէ , ձեզ միայն չէք ծըներ
 Ձեր զաւակներ :

